

դաց Կ. Եղեան. հմմտ. իր աշխատութիւնը՝ Բոնի միութիւն Հայոց Լեհաստանի ընդ Եկեղեցոյն Հոռովայ: ժամանակակից յիշատակարանք: Պետերբուրգ 1884:

Ինձ աւելի վստահելի աղբիւր կը թուին Սիմէոն դպրի հաղորդագրութիւնները. ուր Սիմէոն թէ՛ իբրեւ ահանատես եւ թէ՛ իբրեւ անաչառ եւ անկողմնակալ տեղեկատու երեւան կու գայ:

Ունիմ աչքի առաջ նաեւ այլեւայլ վաւերագիրներ Հոռով Տարածման Հաւատոյ Ժողովի Դիւանէն, ընդօրինակութեամբ Գերապ. Պ. Գոյունեան Արքեպիսկոպոսի, որոնք իբրեւ լուսատու ջահ կը լուսաւորեն ժամանակակիցներու հաղորդած տեղեկութիւններու ստուերոտ կողմերը:

ՄԵԼՔԻՍԵԳԻԿ ԿԱԹՈՂԻԿՈՍ

1626ին Ապրիլ 22ին, երբ կը հասնէր Մելքիսեղեկ կաթողիկոս Լվով¹, դեռ նոր էր վախճանած տեղւոյն արքեպիսկոպոսը Մեսրոպ Կաֆացի († 1625): Յաջորդին ընտրութեան համար դեռ չէր կայացած որ եւ է սրոյում:

Կաթողիկոսը առաջարկած էր անհովիւ հօտին հովիւ նշանակել կամ զՅովհաննէս Վ.

¹ Relatio brevis causae inter Armenos disunitos ex una et R^{um} D. Nicolaum Torosovicum Archiep^{um} nationis eiusdem in Regno Poloniae et Provincia Palachia parte ex altera, Ի Դիւանին Տարածման Հաւատոյ Ժողովին, Armeni 293, p. 210. Ի յաջորդս պիտի յիշեմ գրութիւնս Relatio brevis համառոտութեամբ: